«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

[«ՀՀ ԲՀՊՏ-ների կարևորությունը ներգնա զբոսաշրջության զարգացման գործում»]

-

ԿԱՏԱՐՈՂ: *Գյումրու թիվ 11 հիմն. դպրոցի ուսուցչուհի՝ Մարգարիտա Եգանյան*

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ: *Աշխարհագրական գիտությունների թեկնածու-դոցենտ՝ Արմեն Ներսիսյան*

ԳՅՈՒՄՐԻ 2023

Բովանդակություն

Ներածություն .----------3

Գլուխ առաջին----------5

Գլուխ երկրորդ ----------11

Եզրակացություն ----------22

Օգտագործված աղբյուրներ ----------23

Ներածություն

Աշխարհում անընդհատ ավելանում է բնության և գյուղական միջավայրի հետ կապված զբոսաշրջության, այդ թվում բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ) այցելելու պահանջարկը: Ընդ որում ներկայացվող պահանջների հարցում աճում է զբոսաշրջիկների բծախնդրությունը ոչ միայն հարմարավետության և մատուցվող ծառայությունների որակի, այլ առավել իմաստալից ճամփորդություն իրականացնելու տեսանկյունից: Այն ներառում է ծանոթանալը ինքնատիպ մշակույթին, բնության, նրա բակիչների՝ վայրի կենդանիների և բույսերի, այդ մեջավայրում գտնվող պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրելը, ինչպես նաև նրանց պահպանության վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելը:

Սույն աշխատաքում ներկայացված է ՀՀ ԲՀՊՏ-ների դերը ներգնա զբոսաշրջության զարգացման գործում: Մարդկանց համար միշտ էլ մեծ հետաքրքրություն են առաջացրել ՀՀ բնության անխախտ տարածքները և նրանց կենդանական աշխարհը:

Առաջին գլխում տեղ են գտել ընդհանուր տեղեկություններ էկոլոգիական զբոսաշրջության մասին, թե ինչ է այն իրենից ներկայացնում և ինչ տարածքներ է ներառում: Ինչպես նաև ներկայացվում է էկոլոգիական զբոսաշրջության արդի վիճակը Հայաստանում և նրա զարգացման հեռանկարները:

Երկրորդ գլխում ներկայացվում է բնության հատուկ պահպանվող տարածքները ՀՀ-ում, դրանք են՝ պետական արգելոցները, պետական արգելավայրերը, ազգային պարկերը և բնության հուշարձանները: Այստեղ նաև ներկայացվում են ՀՀ ԲՀՊՏ-ները որպես զբոսաշրջային ռեսուսներ և նրանց կարևորությունը ներգնա զբոսաշրջության գործում:

Գլուխ 1. Էկոլոգիական զբոսաշրջություն: Ընդհանուր բնութագիրը

Էկոլոգիական զբոսաշրջությունը (էկոտուրիզմ, էկոզբոսաշրջություն), ճանաչողության նպատակով դեպի բնություն, բնական հուշարձաններ կազմակերպվող և իրականացվող զբոսաշրջությունն է: Էկոզբոսաշրջության խնդիրներն են բնական ժառանգության պահպանության օժանդակումը, ազգաբնակչության՝ էկոլոգիական կրթության և իրազեկվածության բարձրացումը: Էկոզբոսաշրջությունը զբոսաշրջության առավել արագ զարգացող տեսակներից է, չի նախատեսում հարմարավետ հյուրանոցներ և բարձրակարգ ծառայությունների սպասարկում, իրականացվում է ավտոմեքենայով, հետիոտն, ձիով և այլ միջոցներով: Ըստ բնույթի տարբերակում են էկոզբոսաշրջության բնապահպանական, գիտական և ճանաչողական ենթատեսակները: Մասնագիտական գրականության մեջ տրվում է էկոտուրիզմի հետևյալ սահմանումները.

1. Էկոտուրիզմը ճանապարհորդություն է դեպի բնական տարածքներ, ենթադրում է շրջակա միջավայրի պահպանություն և ապահովում տեղի ժողովրդի բարեկեցությունը:
2. Էկոտուրիզմ՝ տուրիզմ, որը նպաստում է բնական և մշակութային ժառանգության ճանաչմանն ու ըմբռնմանը, գնահատմանը ու պահպանմանը:
3. Էկոտուրիզմը հնարավորություն է ընձեռում ճանաչել բնությունը, հիանալ նրանով՝ առանց զրկելու հաջորդ սերունդներին նման հնարավորությունից:
4. Էկոտուրիզմը բնության հուշարձանների և տեսարժան վայրերի ուսումնասիրության նպատակով իրականացվող ճանապարհորդությունն է՝ կապված բնության չխախտված տարածքների հետ, որը նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը, շրջակա միջավայրի վրա ունենում է
5. «մեղմ» ազդեցություն, ապահովում է տեղացի բնակիչների ակտիվ սոցիալ-տնտեսական մասնակցությունը և նրանց ներգրավումը, այդ գործունեությունից եկամուտների ստացումը:

6. Էկոտուրիզմը դեպի բնական տարածքներ իրականացվող պատասխանատու ճանապարհորդությունն է, որը նպաստում է բնության պահպանությանն ու բարելավում տեղացի բնակչության բարօրությունը (Էկոտուրիստական հասարակություն, TheEcotourismSociety):
7. Էկոտուրիզմը զբոսաշրջային տեսակ է, որը ներառում է դեպի համեմատաբար անխախտ բնություն ունեցող վայրեր ճանապարհորդություններ տվյալ տարածքի բնական, մշակութային և էթնիկ առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով, որը չի խախտում էկոհամակարգի ամբողջականությունը և ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնք թույլ են տալիս իրականցնել բնության ու բնական ռեսուրսների պահպանման արդյունավետությունը (Վայրի բնության համաշխարհային ֆոնդ):

Էկոզբոսաշրջության սկզբունքներն են.

- Ծանոթանալ բնության, տեղական սովորույթների և մշակույթի հետ:
- Նվազագույնի հասցնել բնական և սոցիալ-մշակութային բնույթի բացասական ազդեցությունները, ապահովել էկոլոգիական կայունություն:
- Աջակցել բնության և տեղական սոցիալ-մշակութային միջավայրի պահպանությանը:
- Բնապահպանական կրթությունը և իրազեկումը:
- Բնակիչների մասնակցությունը և տուրիստական գործունեությունից եկամուտների ստացումը, ինչը նրանց համար ստեղծում է բնության պահպանությանը միտված տնտեսական խթաններ:
- Խթանել տնտեսական արդյունավետությունը և տարածաշրջանների կայուն զարգացումը:

Էկոտուրիզմը Հայաստանում համեմատաբար նոր երևույթ է: Ինչպես գիտենք, այն իր հիմքում ունի բնության գրկում հանգստանալու, ժամանակ անցկացնելու գաղափարը: Այս գաղափարը սակայն ավելի լայնէ, քան պարզապես ճանապարհորդությունը. այն ընդգրկում է ծանոթություն կենդանական և բուսական աշխարհին և նրա բազմազանությանը, տեղի ավանդույթներին,

սովորույթներին և մշակույթին: Էկոտուրիզմը ճանապարհորդություն է դեպի այն վայրեր, ուր շատ թե քիչ պահպանված է անաղարտ բնությունը: Էկոտուրիզմի զարգացմանը նպաստեց զբոսաշրջիկների ցանկությունը ստանալու նոր և անկրկնելի տպավորություններ, նպաստելու բնության պահպանմանը, զանգվածային զբոսաշրջության նկատմամբ հետաքրքրության նվազումը: Հայաստանը տարածաշրջանում էկոտուրիզմի համար ամենաբարենպաստ գոտիներից մեկն է: ՀՀ հարուստ է բնական և պատմամշակութային հուշարձաններով, ռեկրեացիոն պաշարներով, որոնք էկոզբոսաշրջության զարգացման կարևոր նախապայմաններ են հանդիսանում:

- Հայաստանը, գտնվելով ծովի մակարդակից 390- 4090մ բարձրության վրա, իր փոքր տարածքում ներառել է բնական ռեսուրսների անսահման բազմազանություն՝ քարե կիսաանապատներից մինչև ճահճուտներ, սաղարթավոր անտառներ և ալպիական մարգագետիններ: Հայաստանում տարվա ընթացքում բույն են հյուսում 360-ից ավելի թռչնատեսակներ, մինչդեռ ամբողջ Եվրոպայում դրանց քանակը ընդամենը 400-500 է: Հատկանշականէ, որ հենց Հայաստանում է աճում ցորենի վայրի նախնին: Հայաստանում հանդիպող մուֆլոնն իր ազգակիցների մեջ համարվում է միակը և անկրկնելին: Հյուսիս-արևելքում՝ Խոսրովի անտառում, Վայքում, Զանգեզուրում կարելի է հանդիպել
- հովազի, կովկասյան գորշ արջերի, լուսանների, գայլերի և այլն: Հայաստանում մեկ քառակուսի կիլոմետր տարածության վրա կարելի է հանդիպել 100-ից ավելի բուսատեսակ, ինչը համաշխարհային չափանիշներով համարվում է ռեկորդային: Հայկական բուսատեսակներից 200-ը համարվում են ռելիկտային: Դիլիջանը, որը հայտնի է իր խոնավ կլիմայով և հետաքրքիր բնությամբ, հիանալի էկոտուրիստական վայր է:
- Հայաստանի կենդանատեսակների մեկ քառորդը, ինչպես նաև բազմաթիվ ռելիկտային բուսատեսակներ գտնվում են անհետացման եզրին: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանի հողատարածքի մի զգալի մասը ինտենսիվ կերպով շահագործվում է: Բայց Հայաստանում, հատկապես բարձր

լեռնային գոտում և կիսանապատային տարածքներում դեռ կան կուսական տարածքներ:

Հայաստանում վանքերը կառուցված են բնակավայրերից հեռու, այնտեղ, ուր բնությունը հիասքանչ է: Ամբողջական էկոլոգիան իր մեջ չի կարող չներառել պատմությունը: Պատմական և բնական հուշարձանները փոխկապակցված ու միասնական են: Հայստանում կուսական տարածքներում բնության, պատմական և մշակութային հուշարձանների բազմազանությունը լրացնում են իրար:

Սակայն վերջին տասնամյակի պայմանների վատթարացումը հանգեցրել է բնական պաշարների անխնա, երբեմն անմիտ օգտագործմանը, քանզի այն հաճախ արվել է առանց համապատասխան սրտացավության և առանց մասնագիտական հսկողության և վերահսկման՝ առանց անհրաժեշտ գիտելիքների: Դա հանգեցրել է բնական համակարգերի՝ անտառների, ճահճուտների, լեռնային մարգագետինների ընդհանուր վիճակի վատթարացմանը, որը կարող է անուղղելի հետևանքներ ունենալ: Այս ամենի հետևանքով կարող են անհետանալ բույսերի ու կենդանիների բազմաթիվ տեսակներ, այդ թվում էնդեմիկ և արժեքավոր տեսակներ: Պետության գործադրած ջանքերը չեն լուծում Հայաստանի առջև ծառացած էկոլոգիական բոլոր խնդիրները: Որպես հեռանկարային ուղի՝ այս խնդիրները լուծելու համար էկոտուրիզմը անփոխարինելի է: Եվ այս ամենի հիման վրա կարելի է ասել, որ Հայաստանում զարգացման մեծ հեռանկարներ ունի: Էկոտուրիզմ հասկացությունը Հայաստանում 10 տարի առաջ է ներդրվել: Էկոտուրիզմի մեջ մտնում է արկածային, բնության հատուկ պահպանվող տարածքների և գյուղական զբոսաշրջությունը: Սակայն զբոսաշրջության այդ տեսակները Հայաստանում լիովին զարգացած չեն: Բնապահպանական խնդիրներն ազդում են զբոսաշրջության զարգացման վրա: Ուստի, պետքէ համապատասխան մեխանիզմներ մշակել, որպեսզի զբոսաշրջությունը հնարավորինս շատ օգուտներ բերի տնտեսությանն ու գյուղական համայնքներին՝ բնության վրա հնարավորինս քիչ բացասական ազդեցություն ունենալով: Էկոտուրիզմի

նպատակն է ստեղծել զբոսաշրջության զարգացման համար կենսունակ և կայուն հնարավորություններ՝ միևնույն ժամանակ բարելավելով տեղի բնակչության կյանքը: Հայաստանում էկոտուրիզմը զարգացնելու համար շատ մեծ հնարավորություններ կան: Պահպանելով բնությունը բնակչությունը այն պետք է դիտի որպես եկամտի աղբյուր: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս բնագավառում առանձնապես խոշոր ներդրումներ չեն պահանջվում: Սակայն դրանից ստացվող տնտեսական ու հատկապես՝ էկոլոգիական արդյունավետությունը նշանակալից կլինի:

Հայաստանի տարածքում մշակվել են զբոսաշրջության 4 առանցքներ՝ հարավային, հյուսիսային, օղակաձև (Սևանա լճի շրջակայքը) և Երևանը, որը ներառում է մայրաքաղաքին մոտ տարածքները: Ներկայումս գերակա ուղղությունը հարավային տուրիստական առանցքի զարգացումն է: Այնտեղ զարգացման մեծ ներուժ կա, և կարելի է անմիջական արդյունքը ստանալ շատ արագ:Էկոզբոսաշրջությունն առավելապես նպատակահարմար է զարգացնել Սյունիքում, Վայոց ձորում, Սևանի ավազանում, Լոռու և Արագածոտնի մարզերում, որտեղ կան բնական ու մարդածին բազմազան հրաշալիքներ: Հայտնի է, որ հատուկ պետական օրենք է ընդունված Սևանի էկոհամակարգը պահպանելու համար: Հետևաբար, նպատակահարմար է հատկապես ամռան ամիսներին Սևանի ազգային պարկի ամբողջ տարածքում դադարեցնել ավտոմեքենաների երթևեկությունը զբոսանքի, հանգստի նպատակներով և իրականացնել ձիազբոսանք կամ հետիոտն զբոսանքներ:

Հայաստանի Հանրապետությունն ունի բնական շատ գեղատեսիլ, զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող վայրեր: Սակայն այդ վայրերում զբոսաշրջիկներին այլ գրավչություններ և հետաքրքրություններ չեն առաջարկվում: Մինչդեռ յուրաքանչյուր տեսարժան վայր այդ առումով նպատակահարմար է բարելավել այնպես, որ ներկայանալի լինի օտարերկրացիներին, որպես իրենց այցելության գլխավոր հրապուրանք կամ գրավչություն՝ ապահովելով համապատասխան ծառայություններով:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունը հարուստ է

քարանձավներով: Քարանձավները միշտ էլ հրապուրել են մարդկանց: Սկզբում հեքիաթային գանձեր էին փնտրում այնտեղ, իսկ հետո սկսեցին թափանցել «ստորգետնյա թագավորության» գաղտնարանները, որտեղ թաքնված են հնագույն պատմության յուրօրինակ վկաներ ու բնական անկրկնելի հրաշագործություններ: Բնության այս անկրկնելի գանձերը կարելի է վերածել էկոզբոսաշրջության ռեսուրսների: Հայաստանի Հանրապետության այս բացառիկ հարստությունը կարող է գրավել և գայթակղել ամենախստապահանջ զբոսաշրջիկներին և շոյել նրանց նուրբ ճաշակը:

Գլուխ 2. Բնության հատուկ պահպանվող տարածքները ՀՀ-ում

Բնական էկոհամակարգերի հավասարակշռությանը նպաստող պայմաններից են բնական միջավայրում բուսական և կենդանական տեսակների պահպանությունը, և դրանց վերարտադրության հնարավորությունների առկայությունը: Կենսաբազմազանության ռեսուրսների օգտագործումը, հատկապես վերջին հարյուրամյակում, ընթացել է առանց հաշվի առնելու տեսակների վերատադրության հնարավորությունները: Այդ իսկ պատճառով աստիճանաբար տեղի է ունեցել թվաքանակի կրճատում՝ մի շարք տեսակներ հայտնվել են անհետացման եզրին, իսկ որոշներն էլ արդեն ոչնչացել են:

Կենսաբազմազանության պահպանության ամենաարդյունավետ տարբերակը համարվում է բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) ստեղծումը: Բնության հատուկ պահպանվող տարածքները ապահովում են եզակի էկոհամակարգերի, հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող, էնդեմ, ռելիկտային տեսակների պահպանությունը և վերարտադրությունը բնական միջավայրում:

Բնության հատուկ պահպանվող տարածքները դասակարգվում են՝

1. Խիստ պահպանության ռեժիմով բնական արգելոց –օգտագործվում է գիտական նպատակներով: Այս կարգավիճակին համապատասխանում են ՀՀ արգելոցները:
2. Խիստ պահպանության ռեժիմով տարածք (բնության տեղամաս)- օգտագործվում է հիմնականում վայրի բնության պահպանության նպատակով:
3. Ազգային պարկ –Էկոհամակարգերի պահպանություն, տուրիզմ: Այս կարգավիճակին համապատասխանում են ՀՀ ազգային պարկերը:
4. Բնության հուշարձան –բնության տեսարժան համալիրների պահպանություն: Այս կարգավիճակին համապատասխանում են ՀՀ բնության հուշարձանները:

5. Արգելավայր – Տեսակների և դրանց ապրելավայրերի պահպանություն՝ ակտիվ կառավարման միջոցով: Այս կարգավիճակին համապատասխանում են ՀՀ արգելավայրերը:
6. Ցամաքային և ջրային լանդշաֆտների պահպանություն, ռեկրեացիա:
7. Կառավարվող ռեսուրսներով պահպանվող տարածքներ – ռեսուրսների խնայողական օգտագործում:

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը ձևավորվել է 1958թ.-ին: Ներկայումս ՀՀ-ում գործում են 33 ԲՀՊՏ-ներ՝ 3 պետականարգելոց, 26 պետական արգելավայր, 4 ազգային պարկ և բնության 230 հուշարձան:

Պետական արգելոցներ

Պետական արգելոցները գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և հանրապետական նշանակություն ունեցող տարածքներ են, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության: Արգելոցներում անժամկետ պահպանության տակ են վերցված բնության բոլոր բաղադրիչները միասին: Դրանք ենթակա չեն տնտեսական օգտագործման, խստիվ արգելվում են որսը, հատումները, խոտհունձը, անասունների արածեցումը, բույսերի ներմուծումը, կլիմայավարժեցումը և այլն: Մարդկային գործունեությունը սահմանափակվում է միայն գիտական հետազոտություններով և ճանաչողական զբոսաշրջությամբ:

ՀՀ պետական արգելոցներն են՝ Խոսրովի, Էրեբունու, Շիկահողի, որտեղ մարդկանց գործունեությունը սահմանափակվում է միայն գիտական աշխատանքով, ինչպես նաև սահմանափակ քանակությամբ գիտաճանաչողական էքսկուրսիաներով: Պետական արգելավայրերը գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածքներ են, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների բնական վերարտադրությունը: Արգելավայրերի տարածքում արգելվում է ամեն մի գործունեություն, որը խախտում է արգելավայրի էկոհամակարգերը կամ

սպառնում է հատուկ գիտական և մշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը: Այստեղ սահմանափակվում կամ արգելվում է ցանկացած գործունեություն, որը հակասում է արգելավայրի սահմանափակումներին: Ի տարբերություն պետական արգելոցների, որտեղ խիստ ռեժիմով պահպանվում են էկոհամակարգերը և արգելվում է ցանկացած տեսակի տնտեսական գործունեություն, արգելավայրերում կարող են պահպանվել էկոհամակարգի առանձին տեսակներ կամ նույնիսկ մեկ էկոհամակարգ: Այստեղ թույլ է տրվում նաև տնտեսական գործունեություն իրականացնել, եթե այն չի վնասում պահպանման ենթակա տեսակները: Պետական արգելավայրերն ունեն կանոնադրություն, ըստ որի էլ կազմակերպվում է նրանց կենսագործունեությունը:

Հայաստանում 1950-80-ական թվականներին կազմավորվել և ներկայումս գործում են 26 արգելավայրեր:

Հայաստանի Հանրապետության պետականարգելավայրերն են՝

1. Ախնաբադի կենու պուրակ,
2. Արագածի ալպիական արգելավայր,
3. Արզականի և Մեղրաձորի արգելավայր,
4. Արջատխլենու արգելավայր,
5. Բանքսի սոճու պուրակ,
6. Բողաքարի արգելավայր,
7. Գանձաքարի արգելավայր,
8. Գետիկի արգելավայր,
9. Գիհու նոսրանտառային արգելավայր,
10. Գյուլագարակի արգելավայր,
11. Գոռավանի ավազուտներ արգելավայր,
12. Գորիսի արգելավայր,
13. Գիլանի արգելավայր,
14. Եղեգնաձորի արգելավայր,
15. Զանգեզուրի արգելավայր,

16. Իջևանի արգելավայր,
17. Խոր վիրապ արգելավայր,
18. Հանքավանի ջրաբանական արգելավայր,
19. Հերհերի նոսրանտառային արգելավայր,
20. Մարգահովիտի արգելավայր,
21. Մրտավարդենու արգելավայր,
22. Որդան կարմիր արգելավայր,
23. Ջերմուկի անտառային արգելավայր,
24. Ջերմուկի ջրաբանական արգելավայր,
25. Սոսու պուրակ,
26. Սև լճի արգելավայր:

Ազգային պարկեր

Ազգային պարկերը (ներառյալ ջրատարածքները) բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող միջազգային կամ հանրապետական նշանակություն ունեցող տարածքներ են, որոնք բնական լանդշաֆտների և մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող են օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն,

մշակութային և տնտեսական նպատակներով, որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

Ազգային պարկերը ապահովում են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրությունը, պահպանությունը, հաշվառումը, գույքագրումը, մոնիթորինգը, ինչպես նաև բնական և մշակութային լանդշաֆտների բարենպաստ զուգորդման շնորհիվ դրանց օգտագործումը ռեկրեացիոն, պատմամշակութային ու գիտական նպատակներով: Պարկի տարածքը բաժանված է արգելոցային, հանգստի և տնտեսական գոտիների: Կարող են ընդգրկվել նաև արգելավայրեր:

ՀՀ ազգային պարկերն են Սևան ազգային պարկը, Դիլիջան ազգային պարկը, Արփի լճի ազգային պարկը և Արևիկ ազգային պարկը:

Բնության հուշարձաններ

Բնության հուշարձանները բացառիկ կամ տիպիկ, գիտական և պատմամշակութային հատուկ արժեք ներկայացնող օբյեկտներն են: ՀՀ կառավարության որոշմամբ՝ 2008թ. հաստատվել է ՀՀ արածքում գտնվող 230 բնության հուշարձանների ցանկ: ՀՀ բնության կենդանի հուշարձաններից են «Վարդան Մամիկոնյանի կաղնին», «Տանձուտը» , «Սֆագնումային մամուռները» և այլն: Անկենդան հուշարձաններից են բազալտե սյունաձև և ճառագայթաձև մերկացումները (Ազատի, Արփայի, Հրազդանի կիրճեր), հրաբխային կոները (Գեղամա, Վարդենիսի լեռնաշղթաներ), ռելիեֆի հողահարման եզակի ձևերը՝ բնական ժայռաբուրգերը (Գորիս, Խնձորեսկ), ինչպես նաև բազմաթիվ բարձրալեռնային լճակներ, հանքային աղբյուրներ, ջրվեժներ (Շաքեի, Թռչկանի, Զերմուկի ջրվեժներ), սահանքներ և այլն:

Մարդկության կողմից բնության հատուկ պահպանվող տարածքներ ստեղծումը դարեր շարունակ եղել է մշակութային երևույթ: Այդ վայրերը կատարում են բնական կամ պատմամշակութային ժառանգության պահպանության գործառույթ: Շատ դեպքերում մարդկանց այցելություններն են դարձել ԲՀՊՏ-ների ձևավորման և պահպանման սկզբնական դրդապատճառը: Ինչքանով ԲՀՊՏ-ներն են հետաքրքրություն ներկայացնում զբոսաշրջության համար, այնքանով էլ զբոսաշրջությունը հիանալի հնարավորություն է ընձեռում այդ տարածքների ներկայացման և պահպանության համար: Զբոսաշրջությունն ունի բոլոր նախապայմանները ԲՀՊՏ-ների կայուն կառավարման գործում կարևոր օղակ դառնալու համար: ՀՀ ԲՀՊՏ-ներից կարևոր զբոսաշրջային ռեսուրսներ են հանդիսանում Խոսրովի արգելոցը , «Դիլիջան» ազգային պարկը, «Սոսու պուրակ» արգելավայրը իրենց բազմազան և հազվագյուտ բուսական և կենդանական աշխարհով և «Սատանի կամուրջ» բնության հուշարձանը:

Խոսրովի արգելոց

Խոսրովի անտառը 1958թ.-ից հանդիսանում է պետական արգելոց: Այն

ստեղծվել է բուսական և կենդանական աշխարհի պահպանման, բարելավման և նոր տեսակների ստացման նպատակով: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի հարավային լեռնաճյուղի Գառնի և Վեդի գետերի ավազանում: Տեղակայված է ՀՀ Արարատի մարզի տարածքում, զբաղեցնում է 29126 հա տարածք: Ռելիեֆը լեռնային է, կտրտված՝ բազմաթիվ կիրճերով:

Խոսրովի արգելոցի բուսական աշխարհը շատ հարուստ է և պարունակում է 1800 բուսատեսակ, ինչը կազմում է Հայաստանի ֆլորայի 50%-ից ավելին, դրանցից 146 գրանցված են ՀՀ Կարմիր գրքում, իսկ 24-ը էնդեմիկ են օրինակ՝ հայկական ալոճենին, Վավիլովյան աշորան և այլն: Արգելոցում ներկայացված են կաղնուտներ, գիհու նոսրանտառներ, լեռնային տափաստաններ և այլն:

Արգելոցի կենդանական աշխարհը ևս հարուստ է: Արգելոցում բնակվում են 142 տեսակ թռչուններ, որոնցից 66-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում՝ ներառյալ եգիպտական, սև և սպիտակագլուխ գիշատիչը, մորուքավոր հափշտակիչը, ոսկե և ավելի քիչ խայտաբղետ արծիվները և հյուսիսային բազեն:

Կաթնասունները ներկայացված են 55 տեսակով, որից 18-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Դրանք են Անդրկովկասյան գորշարջը, վարազը, լայնականջ ոզնին, հայկական մուֆլոնը, բեզոարյան այծը, լուսանը, գայլը, աղվեսը և շատ ուրիշները: Արգելոցում անողնաշար կենդանիները և մասնավորապես, միջատները ներկայացված են յուրահատուկ բազմազանության հատուկ կազմով: Կան ամֆիբիաներ, 7 ձկնատեսակ և այստեղ բնակվող ավելի քան 30 սողուններ, ինչպես օրինակ՝ Լեվանտական իժը, Մոնտպելիեր օձը, կետավոր գաճաճը և փաթաթված գաճաճ օձը, Պլեսկեսյան մողեսը, հնգաշերտ և եռակոս մողեսը, ոսկե խոտ և Սնայդերի (Խաբեբայի) սցինկ-մողեսը, արևելյան կարճոտը և այլն:

Խոսրովի արգելոցը ներառում է բազմաթիվ բնական գրավչություններ. հսկա «քարե երաժշտական երգեհոնը», առեղծվածային քարանձավներ, ստվերոտ կիրճեր և ալպիական մարգագետիններ, հնադարյան կաղնիներ և յուրահատուկ ծաղիկներ: Բազմաթիվ պատմական հուշարձաններ, քարանձավային բնակատեղիներ և վաղ միջնադարյան վանքեր, խաչքարեր, եկեղեցիներ և ամրոցներ են պահպանվել այստեղ՝ Գեղարդավանքը, Գառնիի ամրոցը, Հավուց

Թառ վանքային համալիրը, Կաքավաբերդը, Ազատ գետի վրա կառուցված միջնադարյան կամուրջը և այլն:

Խոսրովի արգելոցում կառուցվել է այցելուների կենտրոն, որը կոչված է այցելուներին տեղեկատվություն տալ տարածքի բնության մասին, նրան շահագրգռել հանգիստն անցկացնելու հատկապես տվյալ պարկում: Մասնավորապես նման կենտրոններում կազմակերպվում են ցուցահանդեսներ, բնապահպանական թեմաներով տարբեր ֆիլմերի ցուցադրություններ:

Այսպիսով Խոսրովի արգելոցը գրավիչ է տարբեր հետաքրքրություններ և նախասիրություններ ունեցող զբոսաշրջիկների համար. և՛ էկոզբոսաշրջությամբ հետաքրքրվողների, և՛ բնական ժառանգության և հուշարձանների սիրահարների, և՛ պատմամշակութային վայրերը գնահատողների համար:

«Դիլիջան» ազգային պարկ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է, որն առանձնանում է հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանությամբ, մեզոֆիլ անտառային լանդշաֆտների, գիտական, ճանաչողական և տնտեսական բարձր արժեքներ ունեցող առանձին էկոհամակարգերի ու բնության հուշարձանների բնապահպանական, գիտա-ճանաչողական, առողջապահական և ռեկրեացիոն բարձր արժեքներով: Ազգային պարկը գտնվում է հանրապետության հյուսիսային հատվածում՝ Փամբակի, Արեգունու, Միափորի լեռնաշղթաների լանջերին, Աղստև և Գետիկ գետերի ավազաններում՝ ծովի մակարդակից 1000-2200 մ. Բարձրության սահմաններում:

«Դիլիջան» ազգային պարկը ստեղծվել է 1958թ.-ին: «Դիլիջան» ազգային պարկի կազմակերպման հիմնական նպատակը Աղստև և Գետիկ գետերի ավազանների ջրային ու ցամաքային էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ու պատմամշակութային հուշարձանների պահպանության ապահովումն է: Պահպանության օբյեկտներն են կովկասյան տիպի մեզոֆիլ անտառները,

հաճարենու և կաղնու համակեցությունները, կենու եզակի պուրակը, անտառային հազվագյուտ ֆաունան և պատմաճարտարապետական ու բնության եզակի հուշարձանները:

Պարկի տարածքը բաժանվում է երեք տարածքագործառնական գոտիների՝ արգելոցային, ռեկրացիոն և տնտեսական. Ընդ որում՝ արգելոցային գոտում արգելվում է ցանկացած գործունեություն, որը կարող է խախտել բնական էկոհամակարգերն ու օբյեկտները կամ վտանգի ենթարկել գիտական ու մշակութային արժեք ներկայացնող օբյեկտների պահպանությունը: Այս գոտում մարդու գործունեությունը սահմանափակվում է՝ թույլատրելով միայն գիտահետազոտական աշխատանքներն ու զբոսաշրջությունը: Պարկի ռեկրացիոն և տնտեսական գոտիներում թույլ տրվում է իրականացվել միայն պարկի ռեժիմին համապատասխան բնապահպանական և բնօգտագործման աշխատանքներ:

Ազգային պարկի բուսաշխարհն ընդգրկում է 902 տեսակ ծաղկավոր բույսեր, որոնցից 40-ը հազվագյուտ են: 29 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր Գրքում: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենի, կաղնի, բոխի, լորենի, հացենի, սոճի և գիհի: Դեղատուներից լայն տարածում ունեն դաղձի, ուրցի, սննդային բույսերից՝ ավելուկի, սիբեխի տեսակները: Արգելոցն ունի հարուստ կենդանական աշխարհ: Հանդիպում են այծյամ, գորշուկ, քարակզաքիսը, գորշայծ, աղվես, լուսան, պարսկականսկյուռ, ինչպես նաև բազմաթիվ սողուններ և երկկենցաղներ: Կան բազմաթիվ թռչուններ՝ կովկասյան ցախաքլոր, գորշ կաքավ, անտառային կտցար, լեռնային հնդկահավ:

Արգելոցի տարածքում են գտնվում Հաղարծինը, Ջուխտակը, Գոշավանքը և Մաթոսավանքը:

2016թ.-ի մարտին Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի կողմից Էկոտուրիզմի զովազդման նպատակով այցելություններ են կատարվել Դիլիջան քաղաքում գործող մի շարք հյուրատներ: Նշված հյուրատներում ներկայացվել

են «Դիլիջան» ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները, տրամադրվել են տեղեկատվական նյութեր՝ գրքույկներ, բուկլետներ:

Էկոզբոսաշրջությունը զարգացնելու նպատակով ազգային պարկի ռեկրեացիոն գոտում առանձնացվել են 11 էկոերթուղիներ, որոնք կահավորված են բացատրական ցուցանակներով և ուղիների նշագրումներով: Ռեկրեացիոն բաժինն ապահովված է վրաններով, քնապարկերով, գազօջախներով, հեռադիտակներով և զբոսաշրջիկներին անհրաժեշտ այլ պարագաներով, կան որակավորված ուղեկցողներ, հեծանիվներ և ձիեր: Նախատեսվում է պարկի ադմինիստրատիվ շենքում հիմնել բնության թանգարան, վերանորոգել մուտքի քարանձավը և տարածքում կառուցել 6-8 տեղանոց հյուրատուն՝ գիտական աշխատանքներ իրականացնելու նպատակով այցելած հյուրերի գիշերակացի ապահովման համար:

«Սոսու պուրակ» արգելավայրը

«Սոսու պուրակ» արգելավայրը իր մեջ ներառում է արևելյան սոսու Կովկասում ամենախոշոր բնական պուրակը: Այն ստեղծվել է 1958 թվականին և այժմ զբաղեցնում է 64.2 հա տարածք: Մինչև 2004 թվականը գտնվել է Կապանի անտառ տնտեսության ենթակայության տակ, իսկ հետո բնապահպանական գործունեությունը խստացնելու նպատակով հանձնվել է «Շիկահող» արգելոցին: Արգելավայրը գտնվում է «Շիկահող» արգելոցին կից Ծավ գետի հովտում: Մարդու գործունեության ազդեցությունը մեղմացնելու համար արգելավայրը շրջապատված է մոտ 100 մ լայնություն ունեցող բուֆերային գոտով: Սուսու պուրակը ունի ձգված տեսք՝ Ծավ գետի երկայնքով 50-200 մ լայնությամբ և 10 կմ երկարությամբ: Պուրակի հիմքում ընկած են 200-250-ամյա հազարից ավել ծառեր, որոնք հասնում են 30-35 մ բարձրությանը և պահպանվել են մինչ այժմ: Բացի սոսուց, այստեղ աճում են նաև այլ արժեքավոր և հազվագյուտ տեսակներ՝ հունական ընկուզենին, արաքսյան կաղնին, հունական շրջահյուսը, թավշային իլենին և այլն: Ողնաշարավորների ֆաունայից բավականին բազմազան են սողունները՝ 7 տեսակի մողեսներ, 8 տեսակի օձեր և 2 տեսակի կրիաներ: Հազվագյուտ տեսակներից հանդիպում են շերտավոր մերկաչքը, կատվաձը և անդրկովկասյան

սահնօձը:

2015թ.-ի նոյեմբերին մեկնարկվել էր «Էկոզբոսաշրջությունը Հայաստանում» ճանաչողական ծրագիրը: Ճանաչողական արշավի ընթացքում կազմակերպչական թիմի կողմից 5 լիամետրաժ ֆիլմ է նկարահանվել, և 3 կարճամետրաժ ֆիլմեր նկարահանել են մասնակիցները, որոնք սոցիալական հոլովակներ են և անվճար տրամադրվելու են էկոզբոսաշրջային կազմակերպություններին տվյալ ուղղություններով զբոսաշրջային հոսքերն ակտիվացնելու համար:

«Սատանի կամուրջ» բնության հուշարձան

Որոտան գետի կիրճում է գտնվում Սատանի կամուրջը, որի երկարությունը մոտ 30մ է: Կամուրջը գտնվում է Որոտանի կիրճի ամենախոր հատվածում՝ 700-800մ: Այդ հատվածում կիրճն այնքան նեղ է, որ արևի ճառագայթներն անգամ ի զորու չեն թափանցելու նրա հատակը: Հենց այստեղ էլ գտնվում է բնության գեղատեսիլ և արտասովոր հրաշքը՝ Սատանի կամուրջը, որի շրջակայքում կարկաչում են բազմաթիվ լեռնային աղբյուրներ, որոնց ջրերը գունավորել են ձորի պատերը վարդագույն, դեղին և կանաչ գույներով: Այդ հրաշք կառույցը տրավերտիններից կազմված բնական կամուրջ է: Դարերի ընթացքում կրաքարային կուտակումները հավաքվելով կազմել են այս հզոր քարե կամարը, իսկ բնական կամրջի տակ գտնվող ժայռային խորշերից ներքև են թափվում գեղատեսիլ ջրվեժներ: Հանքային աղբյուրները գտնում են հենց կամրջի տակ, որոնք լցվում են Որոտան գետը և այն դարձնում ավելի հորդառատ: Դրա շնորհիվ առաջին հայացքից թվում է, թե կամրջի տակով հոսում է սակավաջուր գետակ, սակայն փոխարենը կամրջից դուրս է գալիս ջրառատ Որոտանը: Հավանաբար, հենց այստեղից էլ ծագել է կամրջի անվանումը: Սատանի կամրջի տակ գտնվող բուժիչ հատկություններով օժտված տաք հանքային ջրերը գոյացրել են ջրավազաններ: Հայտնի է, որ դեռ հնագույն ժամանակներում հայ մեծահարուստներն անպայման ամռան ամիսներին այցելում էին այս հրաշագեղ քարանձավը՝ բուժիչ լոգանք ընդունելու: Չքնաղ է Սյունյաց բնությունը, որի տարածքում 178 կմ երկարությամբ հոսում է Որոտանը Սյունիքի բնական զարդը:

Գետը, հոսելով սքանչելի կիրճով, անցնում է քարեղարյան քարանձավների, բրոնզեդարյան ամրոցների ու վանքերի կողքով: Գետի հունը ինքնին հիանալի վայր է արշավների համար. անտառներով ձգվող արահետները տանում են դեպի Տաթև, Քարահունջ, Հալիձորի բերդ: Գարնան և ամռան ամիսներին Որոտանի կիրճը հրաշալի վայր է ռաֆտինգի սիրահարների համար: Կա մեծ հնարավորություն թիավարելու հորդառատ գետի ալիքներով և միաժամանակ վայելելու բնության գեղատեսիլ տեսարանը՝ խոր կիրճեր, սրածայր լեռնագագաթներ, կղզյակ-ամրոցներ:

Հայաստանում, որտեղ համեմատաբար ոչ մեծ տարածության վրա կան բազմաթիվ բնական և պատմամշակութային հուշարձաններ՝ հնագույն ժայռապատկերներից, հեթանոսական սրբատեղերից մինչև միջնադարյան տաճարներ, հարուստ ֆլորա և ֆաունա, անկասկած գոյություն ունեն իրական հեռանկարներ էկոլոգիական տուրիզմի զարգացման համար: Տարվա տաք եղանակին հայկական սարերում իսկապես կարելի է հանդիպել յոթ գարուններ: Ընդամենը մի քանի ժամում ձյունածածկ գագաթներից կարելի է հասնել մերձարևադարձային հովիտներ: Լինելով լեռնային երկիր և ունենալով լանդշաֆտների ցայտուն արտահայտված բարձունքային գոտիականություն՝ Հայաստանը բնորոշվում է լանդշաֆտային մեծ բազմազանությամբ:

Գործող, կազմավորման ընթացքում գտնվող և հեռանկարային ԲՀՊՏ-ների ցանցը ընդգրկում է Հայաստանի բազմաբնույթ գեղատեսիլ լանդշաֆտային տիպերը: Բնության հրաշալիք Սևանա լճի բարձրալեռնային ունիկալ գեոհամակարգը, «Խոսրովի անտառ» պետարգելոցի բնական վիճակում գտնվող եզակի էկոհամակարգերը, «Դիլիջան ազգային պարկի և «Շիկահող» պետարգելոցի յուրահատուկ լեռնաանտառային լանդշաֆտները, գահավեժ լեռնալանջեր, խոր կիրճերով կտրտված գեղահովիտներ, բարձրադիր սարավանդակներ, քարքարոտ և մարգագետիններով ծածկված լեռնաշղթաներ, արագընթաց գետեր, ջրվեժներ, աղբյուրներ, քարանձավներ, գեղատեսիլ ժայռեր և քարափներ՝ սրանք են մեր պահպանվող տարածքների լանդշաֆտային առանձնահատկությունների ոչ լրիվ ներկապնակը:

Ապահովելով բնական միջավայրի և կարևոր տեսակների պահպանությունը՝ ԲՀՊՏ-ները առանձնանում են ինքնատիպ բուսական և կենդանական աշխարհով և ներկայացնում ոչ միայն գիտական, այլև մեծ ճանաչողական հետաքրքրություն: Հողակլիմայական պայմանների խայտաբղետության և բազմազանության շնորհիվ՝ տեղանքի ռելիեֆից և այլ պայմաններից կախված, այս տարածքների կենսաբազմազանությունը առանձնանում է էնդեմիկ՝ հնագույն ժամանակներից պահպանված և հազվագյուտ տեսակների առատությամբ: ԲՀՊՏ-ներում և նրանց հարող տարածքներում բազմաթիվ են զբոսաշրջության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող տարբեր դարաշրջանների հուշարձաններ՝ ամրոց/բնակատեղիներ, գյուղատեղիներ, վանական համալիրներ, եկեղեցիներ, դամբարանադաշտեր, գերեզմանոցներ և այլն: Բացի դրանից, բազմաթիվ են երկրաբանական հուշարձանները: Հայաստանի ԲՀՊՏ-ների լանդշաֆտային և բնապահպանական հարուստ բազմազանությունը թույլ է տալիս զարգացնել զբոսաշրջության ինչպես ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող, այնպես էլ նեղ մասնագիտակամ բոլոր ձևերը: Պահպանվող տարածքների անմիջական մոտակայքում տեղակայված, յուրաքանչյուր գեղատեսիլ լեռնային գյուղ՝ իր անկրկնելի լանդշաֆտով, կենցաղաձևով, լեռներում թաքնված և ճանապարհորդների համար միայն ոտքով հասանելի յուրահատուկ պատմամշակութային հուշարձաններով պոտենցիալ հետաքրքրություն է ներկայացնում զբոսաշրջության զարգացման համար, որի շրջանակներում կարելի է և հնարավոր է հաջողությամբ համատեղել ագրո-, էկո- և արկածային զբոսածրջության էլեմենտները:

Բոլոր մարզերում կա մեծ հետաքրքրություն և ցանկություն ներգրավված լիելու էկոզբոսաշրջային գործունեության մեջ՝ գյուղական համայնքների, պետական կառույցների, պահպանվող տարածքների անձնակազմի և մասնվոր սեկտորի (փոքր հյուրանոցների, պանսիոնատների, ռեսուսրանների և այլ սեփականատերերի) ներկայացուցիչների կողմից: Կան բազմաթիվ հետաքրքիր մտքեր և հնարավորություններ հայրենի բնաշխարհի և պատմությանը վերաբերող հիանալի գիտելիքներ, սեր հարազատ վայրերի հանդեպ, որը շատ կարևոր

էզբոսաշրջիկներին ներկայացնելու համար: Սակայն բացակայում է զբոսաշրջային գործունեության փորձը, ժամանակակից միջազգային չափանիշների մասին պատկերացումը, ինչպես նաև տեղական զբոսաշրջային արդյունքի ձևավորման, գովազդի և առաջխաղացման համար գիտելիքները և տեխնիկական միջոցները:

Եզրակացություն

Ինչպես արդեն տեղեկացանք էկոլոգիական զբոսաշրջությունը ճանապարհորդության մի տեսակ է, որը իրենից ներկայացնում է այցելություն հիմնական տեսարժան վայրեր՝ բնության գոտիներ, որտեղ բուսական և կենդանական աշխարհն է և մշակութային ժառանգությունը: Նմանատիպ զբոսաշրջության հիմնական նպատակն է պահպանել վայրի բնությունը և ծանոթանալ շրջակա միջավայրին: Այն ստեղծված է աջակցելու շրջակա միջավայրի պահպանմանը, նվազագույնի հասցնելու բացասական ազդեցությունը, ստեղծելու բնապահպանական և մշակութային գիտակցություն և հարգանք շրջակա միջավայրի հանդեպ:Էկոզբոսաշրջությունը կարող է ապահովել ազգային պարկերի և այլ բնական տարածքների պաշտպանությունը: Ավելին, էկոզբոսաշրջությունը կարող է բարձրացնել զբոսաշրջիկների շրջանում կրթության և ակտիվության մակարդակը, դարձնելով նրանց շրջակամ իջավայրի պաշտպանության ավելի խանդավառ և ազդեցիկ գործակալներ:

Վերը նշված տեղեկություններից կարող ենք եզրակացնել, որ Հայաստանում կան բոլոր տվյալները էկոզբոսաշրջությունը զարգացնելու համար, քանի որ տարածքը հարուստ է ԲՀՊՏ-ներով, որոնցից կարևարագույն զբոսաշրջային ռեսուրսներ են հանդիսանում Խոսրովի արգելոցը , «Դիլիջան» ազգային պարկը, «Սոսու պուրակ» արգելավայրը և «Սատանի կամուրջ» բնության հուշարձանը:

Սակայն միևնույն ժամանակ պետք է նշել, որ վերջին տասնամյակի պայմանների վատթարացումը հանգեցրել է բնական պաշարների անխնա, երբեմն անմիտ օգտագործմանը և դա հանգեցրել է բնական համակարգերի՝ անտառների, ճահճուտների, լեռնային մարգագետինների ընդհանուր վիճակի վատթարացման: Այս ամենի հետևանքով կարող են անհետանալ բույսերի ու կենդանիների բազմաթիվ տեսակներ, այդ թվում էնդեմիկ և արժեքավոր տեսակներ: Այդ իսկ պատճառով Հայաստանը պետք է մեծ ջանքեր գործադրի, որպեսզի կարողանա պահպանել բնության էկոհամակարգը, որն էլ խթան կհանդիսանա ներգնա զբոսաշրջությունը զարգացնելու համար:

Օգտագործված աղբյուրներ

1. Ժաննա Գալյան «Էկոտուրիզմը բնության հատուկ պահպանվող տարածքներում» Երևան 2007թ. (13-14, 23-24, 26-30 էջեր)
2. Շուշան Հարությունյան «Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն» Երևան 2004թ. (141-145 էջեր)
3. https://barevarmenia.com/am/armenia_sights/sight295
4. http://econews.am/?p=5935&l=en
5. http://www.dilijanpark.am/
6. http://www.dilijanpark.am/news.html
7. http://sis-blog.info/eco-tour/?p=94
8. https://delanoss.wordpress.com/2012/12/19/%D5%B0%D5%B0-
9. http://www.panorama.am/am/news/2010/09/16/ecoturizm/1056617
10. https://eelizablog.wordpress.com/2012/11/12/%D5%A7%D5%AF%D5%B8
11. http://civilnet.am/2014/02/21/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%
12. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D5%AF%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D6%80%D5%AB%D5%A6%D5%B4
13. http://news.am/arm/news/281138.html
14. http://www.panorama.am/am/news/2014/02/21/xachatryan-morison-manvelyan/346271

Առաջարկ

Էկոզբոսաշրջության գլխավոր նպատակներից է ծանոթությունը բնության և կենդանական աշխարհի հետ: Զբոսաշրջիկները տուրերի ժամանակ գիդերի միջոցով տեղեկանում են տվյալ վայրի առանձնահատկությունների հետ: Սակայն բացի տեղեկություններ ստանալուց զբոսաշրջիկների համար հետաքրքիր կլինի տեսնել, թե ինչպես են մշակվում էնդեմիկ բույսերը կամ ինչպես են բուժում և խնամում այն կենդանիներին, որոնց որ անհետացման վտանգներ են սպառնում: Այդ իսկ պատճառով առաջարկում եմ, որ Հայաստանում որևէ ԲՀՊՏ այցելության ընթացքում զբոսաշրջիկներին հնարավորություն տրվի տեսնել, ինչպես նաև ներառվել այդ գործընթացների մեջ, որը ավելի կբարձրացնի նրանց գիտակցականը բնության անխախտ տարածքների ընկալման հարցում և ավելի տպավորիչ կդարձնի տուրը: Յուրաքանչյուր մարդ զգալով իր դրական ազդեցությունը բուսական կամ կենդանական աշխարհի վրա, կցանկանա շարունակել այդ գործընթացը, որն էլ մեծ խթան կհանդիսանա Էկոզբոսաշրջության զարգացման համար:

Հայաստանում Էկոզբոսաշրջությունը խթանելու և ավելի հետաքրքիր դարձնելու համար նաև կառաջարկեմ զբոսարջության վերջում կազմակերպել ցուցահանդես, որին ներկայացված կլինեն զբոսաշրջիկների կողմից նկարված և՛ կենդանական և՛ բուսական աշխարհի նկարները: Լավագույն նկարները նկարած զբոսաշրջիկները կճանաչվեն հաղթողներ, և նրանց հնարավորություն կտրվի անվճար այցելել Հայաստանի որևէ այլ ԲՀՊՏ: Հետևյալ միջոցով մենք կկարողանանք ավելացնել այցելությունների թիվը բնության հատուկ պահպանության տարածքներ և միևնույն ժամանակ կստանանք մեծ եկամուտներ: